Տասնմեկերորդ հաղորդում

Բարի երկրի արգասիքի հավելուրդն ու Հայր Աստծուն ուղղված ընդհանրականորեն երկրպագելը ճշմարտացիությամբ

Գրվածքների ընթերցում. Երկ Օր 8:7-10, 12:6-7, 11-12, 18, 16:15-17, Եփս 3:8, Հվի 4:23-24

I. Մենք օգտագործում ենք «հավելուրդ» բառը, քանի որ Իսրայելի ժողովուրդը բարի երկրի վրա տքնելու արդյունքում ստացած իրենց արգասիքի որոշակի բաժինն առանձնացնում էր Աստծուն երկրպագելու նպատակով՝ Երկ Օր 12:5-15, 17-18, 20-22, 26-27, 14:22-23, 15:19-20, 16:16-17.

Ա. Բարի երկրի արգասիքի հավելուրդը Քրիստոսի նախատիպն է՝ 8:7-10:

Բ. Իսրայելի ժողովուրդը Աստծուն էր մատուցում Քանանի արգասիքն ու այն վայելում Աստծու հետ:

Գ. Բարի երկրի արգասիքի հավելուրդի վայելքը Քրիստոսի ընդհանրական վայելքի՝ որպես Աստծուն ուղղված մեր երկրպագության նախատիպն է՝ Եփս 3:8:

Դ. Ըստ այս նախատիպի նորկտակարանյան կատարման, երբ գալիս ենք ընդհանրականորեն երկրպագելու Աստծուն, պետք է բերենք Քրիստոսին, ում փորձառաբար ապրել ենք՝ Եփս 3:17-18, Կոլ 1:27, 3:3-4, 11:

II. Եթե մենք հավատարմորեն տքնենք համաբովանդակ Քրիստոսի վրա, կունենանք Քրիստոսի հարստությունը որպես արգասիք, որպեսզի Քրիստոսին ի ցույց դնենք եկեղեցական հավաքույթներին՝ Եփս 3:8, Ա Կրթ 14:26.

Ա. Քրիստոնյայի պատշաճ կյանքը ամեն օր Քրիստոսի վրա տքնելն է և այդպիսով Քրիստոսի հարուստ հավելուրդ ունենալը, որը նրանք կարող են հավաքույթների բերել՝ Քրիստոսի հարուստ ցուցադրման համար՝ խ. 26.

1. Մենք մեկտեղ ենք հավաքվում եկեղեցական հավաքույթներին, որպեսզի Քրիստոսի ցուցադրում ունենանք՝ Կոլ 1:18, 27:
2. Քրիստոսի հարստության մեր ամենօրյա փորձառության շնորհիվ այդ հարստությունը դառնում է Քրիստոսի արգասիքի ցուցադրում՝ Եփս 3:8, 17-18, Կոլ 2:6, 9-10, 17:
3. Մեր հավաքույթները պետք է միշտ ցուցադրում լինեն և ի ցույց դնեն, թե Քրիստոսն ինչ է, Քրիստոսն ինչ ունի, և Քրիստոսն ինչ է անում՝ Եբր 1:3, 2:9, 14, Ա Հվի 3:8, 4:9, 15, Գրծ 2:24, 32-33, Հյտ 1:17բ-18:

Բ. Մենք հավաքվում ենք, որպեսզի ի ցույց դնենք ոչ միայն Աստծուց մեզ տրված Քրիստոսին, այլև այն Քրիստոսին, ում առաջացրել ենք, այն Քրիստոսին, ում վրա տքնել ենք և ում փորձառաբար ապրել ենք. մենք մեկտեղ ենք հավաքվում, որպեսզի ի ցույց դնենք այսպիսի Քրիստոսին՝ Կոլ 1:12-13, Փլպ 3:10:

Գ. Եթե մենք մշտապես տքնենք Քրիստոսի վրա, Քրիստոսի հարուստ հավելուրդ կունենանք, որը կարող ենք հավաքույթների բերել՝ Քրիստոսի հարուստ ցուցադրման համար՝ Ա Կրթ 1:24, 30, 10:3-4, 14:26:

Դ. Ամեն անգամ, երբ մեկտեղ ենք հավաքվում, անկախ այն բանից, թե ինչպիսի հավաքույթ ենք անցկացնում, պետք է գանք մեր կողմից փորձառաբար ապրած Քրիստոսով՝ որպես հավելուրդով, որը կարող ենք մատուցել Աստծուն և ի ցույց դնել ողջ տիեզերքին ու թշնամուն՝ դրանով իսկ նրան ամոթահար անելով՝ Հվի 4:23-24, Եփս 3:10, 17, 4:15.

1. Այդժամ մեր հավաքույթները կհարստանան և կուժեղանան, որովհետև լի կլինեն Քրիստոսով՝ Կոլ 3:4, 10-11:
2. Այդպիսի եկեղեցական կյանքը Քրիստոսի ցուցադրում է՝ Քրիստոսի արտահայտություն՝ Եփս 3:21:
3. Մենք պետք է Քրիստոսի հավելուրդը բերենք յուրաքանչյուր հավաքույթի, որպեսզի ի ցույց դնենք Քրիստոսին՝ խ. 8:
4. Մենք պետք է վայելենք Քրիստոսին մեր ամենօրյա կյանքում և մեկտեղ հավաքվենք՝ Նրան ի ցույց դնելու համար՝ Ա Պտ 1:8:

Ե. Պատշաճ քրիստոնեական հավաքույթներ անցկացնելու համար մենք պետք է ամեն օր մեր անձնական կյանքում շփվենք Տիրոջ հետ, այնուհետև գանք հավաքույթների այն գիտակցությամբ ու հասկացողությամբ, որ գալիս ենք Քրիստոսին ի ցույց դնելու և ուրիշների հետ Քրիստոս կիսելու՝ Ա Կրթ 14:26:

Զ. «Երբ հավաքվենք Քրիստոսի մեջ,/ Հավելուրդը Իր լիության/ Որպես սնունդ Աստծուն բերենք,/ Քրիստոս ի ցույց դնենք:/ Եկեք ի ցույց դնենք,/ Քրիստոս ի ցույց դնենք,/ Իր հավելուրդը բերելով՝/ Քրիստոս ի ցույց դնենք:»՝ Օրհներգ 622, 1-ին տուն և կրկներգ:

III. Մենք պետք է տքնենք համաբովանդակ Քրիստոսի վրա, որպեսզի Քրիստոսի հավելուրդ ունենանք, որը կարող ենք եկեղեցու հավաքույթներին բերել՝ Աստծուն՝ մեր Հորը, ընդհանրականորեն երկրպագելու համար՝ Հվի 4:23-24, Եփս 3:21.

Ա. «Ես քառասուն տարուց ավելի է [սա խոսվել է 1982թ.-ին] մարտնչում եմ Աստծուն իսկական երկրպագություն մատուցելու համար: Հաղթանակն այս մարտում դեռ չի շահվել» (*«Խորանի և ընծաների իրականացումը Հովհաննեսի գրվածքներում»):

Բ. Հայրն Իրեն ուղղված մեր երկրպագության համար պահանջում է, որ մենք Իր մոտ գնանք Քրիստոսի հունձքով. ուստի մենք պետք է եկեղեցու հավաքույթների գանք Քրիստոսի հարստությամբ՝ Հվի 4:23-24, Եփս 3:8:

Գ. Ամեն օր մենք պետք է տքնենք Քրիստոսի վրա, որպեսզի Քրիստոսի հարստության հունձք հավաքենք, որը կարող ենք եկեղեցու հավաքույթներին բերել՝ Հայր Աստծուն ընդհանրականորեն երկրպագելու համար. Քրիստոսը կբարձրացվի ու կփառավորվի, իսկ Հայրը գոհ ու բավարարված կլինի՝ Երկ Օր 12:6, 16:15-17, Ա Կրթ 14:26, Հվի 4:23-24:

Դ. Շատ կարևոր է, որ մենք ջանասիրաբար տքնենք Քրիստոսի վրա, որպեսզի մեր ձեռքերը լցվեն Քրիստոսով, այնուհետև գանք եկեղեցու հավաքույթներին, որպեսզի այս հարուստ և փառավոր Քրիստոսին վայելենք Աստծու զավակների և Հայր Աստծու հետ միասին՝ Ա Կրթ 10:31, 14:26, Հվի 4:23-24, Հռմ 15:6:

Ե. Ամեն անգամ, երբ գալիս ենք Տիրոջ սեղանի հավաքույթին, որպեսզի Տիրոջը հիշենք և Հորը երկրպագենք, մենք պետք է գանք Քրիստոսի հարստությամբ, որն առաջանում է Քրիստոսի վրա մեր ամենօրյա տքնանքի արդյունքում՝ Երկ Օր 16:15-17.

1. Քրիստոսով Աստծուն երկրպագել նշանակում է Նրան երկրպագել Աստծու բոլոր զավակների հետ համատեղ՝ Քրիստոսին վայելելով իրար հետ և Աստծու հետ՝ Ա Կրթ 14:26:
2. Մենք պետք է բավականաչափ Քրիստոս արտադրենք, որպեսզի հավելուրդ առաջանա, որը կարող ենք ուրիշների հետ կիսել և արգասիքի լավագույն մասը մատուցել Հայր Աստծուն՝ Նրա ուրախության, հաճության և բավարարության համար՝ Երկ Օր 15:11, 18:3-4, 12:11:

Զ. Այս վերջին օրերին Տերը կվերականգնի Քրիստոսի իսկական փորձառությունը, որպեսզի հավաքույթներին լինի Նրա հարստության հավելուրդը՝ եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմինը, կառուցելու և հարսի՝ իրեն Փեսայի գալստյանը պատրաստելու համար:

IV. Հվի 4:23-24-ի համաձայն՝ մենք պետք է Հայր Աստծուն երկրպագենք հոգում և ճշմարտացիությամբ.

Ա. Ճշմարտացիությունը բացահայտված աստվածային իրականությունն է, այն է՝ Եռամեկ Աստված, ով Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեջ բաշխվում է մարդու մեջ, որ դառնում է մեր իսկությունը և անկեղծությունը, որպեսզի մենք ապրենք մի կյանքով, որը համապատասխանում է աստվածային լույսին (Ա Հվի 1:5) և երկրպագենք Աստծուն, ինչպես Աստված դա փնտրում է՝ համաձայն այն բանի, ինչ Նա է (Բ Հվի 1, Գ Հվի 1):

Բ. Աստվածային իրականությունը վայելելու հետևանքը մարդկային ճշմարտացիությունը, անկեղծությունն ու իսկությունն է՝ Հվի 4:23-24, Ա Հվի 3:18, Բ Հվի 1, Գ Հվի 1:

Գ. Ճշմարտացիությունը մարդկային իսկությունը, անկեղծությունը, ազնվությունը, վստահելիությունն ու հավատարմությունն է՝ որպես մարդկային առաքինություն և որպես աստվածային իրականության հետևանք՝ Հվի 14:6:

Դ. «Ճշմարտացիություն» բառը Հվի 4:23-24-ում մատնանշում է աստվածային իրականությունը, որը մարդու իսկությունն ու անկեղծությունն է դառնում Աստծու ճշմարիտ երկրպագության համար:

Ե. Աստվածային իրականությունը Քրիստոսն է՝ որպես կենդանի ջրի ակունք՝ կենդանարար Հոգին, ում հավատացյալները հաղորդ են լինում ու խմում, ինչի արդյունքում Նա կարող է նրանց ներսում իրականությու-

նը լինել, որն էլ ի վերջո դառնում է նրանց իսկությունն ու անկեղծությունը, որով նրանք երկրպագում են Աստծուն այն երկրպագությամբ, որ Նա փնտրում է՝ խխ. 10, 14, 23:

Զ. Հորը ճշմարտացիությամբ երկրպագել նշանակում է Նրան երկրպագել այն Քրիստոսով, ով հագեցրել է մեր էությունը, դառնալով մեր անձնական իրականությունը, Եռամեկ Աստծու՝ որպես աստվածային իրականության մեր փորձառության ու վայելքի միջոցով՝ խխ. 23-24:

© 2023 Living Stream Ministry